

Հաստատված է
“Ակադեմիական փոխձանաչման և
շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն”
հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝
ՀՀ ԿԳՆ փոխնախարար՝ Արա Ավետիսյան

“_____” 2009թ. փետրվար

Տարեկան հաշվետվություն 2008թ.

2008թ. ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է իր գործունեությունը կանոնադրությամբ սահմանված ուղղություններով՝ օտարերկրյա որակավորումների ճանաչում, խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում քաղաքացիներին, բարձրագույն կրթական հաստատություններին և օտարերկրյա ու տեղական կազմակերպություններին: Հիմնադրամը նաև մասնակցել է Բոլոնիայի գործընթացի շրջանակներում իրականացվող միջոցառումներին թե՛ տեղական, թե՛ եվրոպական մակարդակում: 2008թ.-ի ընթացքում ընդլայնվել է համագործակցությունը տեղական և միջազգային շահառուների հետ:

2008թ.-ին հիմնադրամը մշակել է իր գործունեության ծրագիրը, որը հաստատվել է խորհրդի կողմից: Ծրագիրը ներառել է այն հիմնական խնդիրները, որոնք առաջնակարգ կարևորություն ունեն օտարերկրյա որակավորումների ճանաչման առումով: Սույն հաշվետվությունը կառուցված է այդ ծրագրի վրա:

1. Ճանաչման վերաբերյալ կրթական օրենսդրական դաշտի լրամշակում, ընթացակարգերի մշակում

2005թ. Հայաստանը վավերացրել է Լիսաբոնի ճանաչման կոնվենցիան, որը նշանակում է, որ այն գործում է ՀՀ-ում և առաջնային է ազգային կրթական օրենսդրության նկատմամբ: Հետևաբար, “Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքը” կարիք ունի լրամշակման: ԱՓՇԱՏԿ-ը կատարել է մանրամասն ուսումնասիրություն և առաջարկել է համապատասխան փոփոխություններ գործող կրթական օրենսդրության մեջ (կից ներկայացվում են փոփոխությունները): Օրենսդրական փոփոխությունները մանրամասն քննարկվել և համաձայնեցվել են ԿԳՆ իրավաբանական վարչության հետ: Փոփոխությունների առաջարկության փաթեթը պատրաստվել է ՀՀ կառավարություն ներկայացնելու համար:

Հիմնադրամը մշակել է “Օտարերկրյա կրթական որակավորումների ճանաչման և խորհրդատվության ապահովման” ընթացակարգը՝ հիմնվելով Լիսաբոնի կոնվենցիայի հիմնական պահանջների վրա (ներկայացվող փաստաթղթերի ցանկ, ժամկետներ, ձևաչափեր և այլն): 2008թ. փետրվարին ընթացակարգը հաստատվել է հիմնադրամի խորհրդի կողմից և տեղադրվել է կազմակերպության կայքում անզլերեն և հայերեն լեզուներով:

2. Օտարերկրյա որակավորումների ճանաչում, խորհրդատվական տեղեկանքի տրամադրում

2008թ. ԱՓՇԱՏԿ-ը խորհրդատվություն է տրամադրել ՀՀ պետական մարմիններին, բուհերին և մի շարք մասնավոր կազմակերպություններին: Շարունակվել է սերտ համագործակցությունը Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի,

Քաղաքացիական ծառայության խորհրդի, Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության, Արտաքին գործերի նախարարության, Դատական դեպարտամենտի, Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության հետ: 2008թ. ընթացքում, մասնավորապես, ստուգվել են ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի ավելի քան 100 դիպլոմներ, այդ թվում նախկին Խորհրդային Միության հանրապետությունների բուհերի կողմից տարբեր ժամանակներում տրված փաստաթղթեր: Խորհրդատվական տեղեկատվություն է տրամադրվել Քրեակատարողական վարչության գրեթե ողջ անձնակազմի կրթական որակավորումների վերաբերյալ՝ քննելով շուրջ 250 ավարտական և այլ ակադեմիական փաստաթղթեր: Արտաքին գործերի նախարարության հետ համագործակցության արդյունքում ստուգվել և տեղեկատվություն է տրամադրվել նախկինում Հայաստանի պետական և ոչ պետական բուհերում ուսանած 112 օտարերկրյա քաղաքացիների հայկական որակավորումների և նրանց ակադեմիական և մասնագիտական իրավունքների վերաբերյալ:

Հետաքրքիր է, որ հետազոտված օտարերկրյա (նախկին խորհրդային) որակավորումների մոտ 30%-ը կեղծված փաստաթղթեր էին և դրանց բացահայտումը հնարավորություն է տվել վերոնշյալ մարմիններին խուսափել անհամապատասխան թեկնածուներին աշխատանքի ընդունելուց: Պետական մարմինները հնարավորություն են ստացել, հիմնվելով ԱՓՇԱՏԿ-ից ստացած տեղեկատվության վրա, որակապես բարելավել աշխատանքի ընդունելության պահանջները՝ պահպանելով պետական մարմիններում բարձրագույն կրթությունը հավաստելու ՀՀ «Կրթության մասին օրենքի» 44.5 դրույթը:

2008թ. ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը ուսումնասիրել և ճանաչման որոշում է կայացրել 14 դիմումի վերաբերյալ, որոնք ներառել են Ռուսաստանի Դաշնությունում (2), Իրանում(4), Իսրայելում (1), Կուբայում (1), Սիրիայում (1), Գերմանիայում(1), Հունաստանում(1), Ֆրանսիայում (1), Ադրբեջանում (1) և Չինաստանում(1) ձեռք բերած որակավորումներ: Դիմորդների որակավորումների ճանաչումը կատարվել է համադրելով օտարերկրյա և ՀՀ համապատասխան մասնագիտության չափորոշիչների ուսման արդյունքները և էական տարբերությունների չհայտնաբերման դեպքում:

Հատուկ ուշադրության է արժանի Չինաստանում՝ մեր երկու երկրների միջև գործող միջպետական պայմանագրի շրջանակներում ձեռք բերված «Չինական բժշկություն» մասնագիտությամբ բակալավրի որակավորման դեպքը: Դիմորդը վերադառնալով Հայաստան դիմել էր շարունակելու կրթությունը, բայց ԿԳՆ-ն մերժել էր դիմորդին, որը Լիսաբոնի կոնվենցիայի և ՀՀ պարտավորությունների ակնհայտ խախտում է: Հայ-չինական միջպետական պայմանագիրը այսօր էլ գործում է և ամեն տարի մի խումբ հայ ուսանողներ ընտրվում են ուսանելու Չինաստանի տարբեր բուհերում: Պայմանագիրը, որը կնքվել է մի քանի տարի առաջ չի անդրադառնում որակավորումների փոխձանաչմանը: ԱՓՇԱՏԿ-ը առաջարկում է ձևավորել աշխատանքային խումբ, որը կվերանայի գործող միջպետական պայմանագրերը Լիսաբոնի կոնվենցիայի դրույթներին համապատասխան ապահովելով անհատի որակավորման արդար և թափանցիկ ճանաչման իրավունքը:

2008թ. ընթացքում եղել են նաև դիմորդներ օտարերկրյա բժշկական և իրավաբանական որակավորումներով, որոնց վերաբերյալ ԱՓՇԱՏԿ-ը տրամադրել է խորհրդատվական տեղեկանքներ՝ հաշվի առնելով նրանց կարգավորվող բնույթը: Տրամադրված ճանաչման որոշումները մեծապես նպաստել են անհատներին իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնելուն կամ շարունակելու կրթությունը:

2008 թ. ընթացքում ԱՓՇԱՏԿ-ն իրականացրել է շուրջ **550** խորհրդատվության տրամադրում, որից **496**-ը՝ ՀՀ պետական մարմիններին և մասնավոր կազմակերպություններին, իսկ մնացածը՝ ԱՓՇԱՏԿ-ի արտասահմանյան գործընկերներին: Համեմատության համար նշենք, որ 2007թ. իրականացվել էր 362 խորհրդատվության տրամադրում:

Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպության կողմից տրամադրվել է **84** խորհրդատվական տեղեկանք արտերկիր մեկնող ՀՀ քաղաքացիներին՝ իրենց կրթության և ՀՀ-ում դրա ակադեմիական և մասնագիտական հնարավորությունների վերաբերյալ (2007թ.-ին տրամադրած 55 տեղեկանքի դիմաց): Խորհրդատվական տեղեկանքների տրամադրման հիմնական նպատակն է նպաստել ՀՀ-ում ձեռք բերված որակավորման համարժեք ճանաչմանն արտերկրում:

Այսպիսով, 2008 թվականի ընթացքում ԱՓՇԱՏԿ-ի կողմից ընդհանուր առմամբ տրամադրվել է **634** խորհրդատվություն և խորհրդատվական տեղեկանք՝ 2007թ.-ի 417-ի համեմատ՝ արձանագրելով աշխատանքային ընդհանուր ծավալի մոտ **52%** աճ (կից ներկայացվում է վերոնշյալ տվյալների դիագրամը):

3. Տեղեկատվության տրամադրում շահառուներին և գործընկերներին

ԱՓՇԱՏԿ-ը ՀՀ կրթական համակարգի և որակավորումների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրել ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի գործընկերներին, Եվրոպական տարբեր երկրների որակի հավաստման գործակալություններին ՅՈՒՆԵՍԿՕ-ին, Եվրոպական վիճակագրական վարչությանը: Շարունակվել է համագործակցությունը ԱՓՇԱՏԿ-ի մշտական գործընկերների՝ Կանադայի Ontario College of Teachers, ԱՄՆ –ի World Education Services, International Education Research Foundation-ի և մի շարք այլ կազմակերպությունների հետ, որոնք իրենց երկրում իրականացնում են կանոնակարգվող մասնագիտությունների ճանաչումը: ԱՓՇԱՏԿ-ի կողմից օտարերկրյա կառույցներին արագ ու արհեստավարժ տեղեկատվության տրամադրումը զգալիորեն դյուրացրել է ՀՀ որակավորումների ճանաչումն արտերկրում, նպաստել այդ որակավորումները ձեռք բերած քաղաքացիների ակադեմիական և մասնագիտական առաջխաղացմանը :

ԱՓՇԱՏԿ-ի ինտերնետային կայքը www.armenic.am, որը գրանցված է ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ միջազգային ցանցում և անընդհատ թարմացվում է՝ տրամադրում է տեղեկատվություն ճանաչման գործընթացների և ազգային կրթական համակարգի ու որակավորումների վերաբերյալ: Համաձայն ԿՏԱԿ-ի՝ կայքը այցելել են շուրջ 9000 այցելու:

ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է աշխատել ճանաչման գործիքների՝ մասնավորապես դիպլոմի հավելվածի ազգային տարբերակի ներդրման և կիրառման գործընթացին: Քննարկումներ են կազմակերպվել Երևանի ճարտարագիտական և Երևանի պետական բժշկական համալսարանների հետ: Եվրախորհրդի/ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Դիպլոմի

հավելվածի լրացման ցուցմունքների վերանայված տարբերակը թարգմանվել և տեղադրվել է հիմնադրամի կայքում ի գիտություն բոլոր բուհերին:

4. Աջակցություն շարժունությունը խթանող ծրագրերին

Ուսանողների շարժունությունը խրախուսելու նպատակով ԱՓՇԱՏԿ-ը տեղեկություններ է տրամադրում կրթական տարբեր ծրագրերի վերաբերյալ, մասնավորապես, Էրասմուս-Մունդուս Եվրամիության համագործակցության կրթաթոշակների մասին: Ծրագիրը հնարավորություն է տալիս ուսանել եվրոպական բուհերում մագիստրոսի կրթական աստիճան ստանալու համար: Ըստ տեղեկությունների, 2008-2009 տարվա կտրվածքով, Էրասմուս Մունդուսի կողմից տրամադրվող կրթաթոշակների միջոցով եվրոպական բուհերում սովորում են միայն 7 ուսանող Հայաստանից:

2008 թ. հունիսին Երևանում տեղի ունեցավ ԵԱՀԿ-ի, ԱՓՇԱՏԿ-ի և Եվրոպական ուսանողների միության համատեղ հանդիպում: Հանդիպման նպատակն էր ծանոթացնել հայ ուսանողներին Բոլոնիայի գործընթացին՝ շեշտադրելով ուսանողների դերը այդ գործընթացում: Հանդիպման արդյունքում մասնակիցները մի շարք առաջարկություններ մշակեցին ուղղված ուսանողական խորհուրդներին, ԲՈՒՀ-երին և ԿԳՆ-ին, մասնավորապես՝

- անկախ և ինքնավար ուսանողական կառույցների ստեղծում,
- համալսարանական ընտրությունների, կրթական բարեփոխումների և այլ կարևոր խնդիրների վերաբերյալ տեղեկատվության ապահովում,
- որակի ապահովման մեխանիզմների մշակման գործընթացում ուսանողների ներգրավում:

Հանդիպման ժամանակ առաջադրվեց հայ ուսանողի մասնակցությունը Լիլի “Եկեք գնանք,” շարժունության վերաբերյալ կոնֆերանսին: Ուսանողի մասնակցությունը կոնֆերանսին հովանավորվեց ԱՓՇԱՏԿ-ի կողմից (կից ներկայացվում է ուսանողի հաշվետվությունը):

5. Բուհերում կիրառվող ճանաչման ընթացակարգերի և փորձառությունների վերանայում

Օտարերկրյա որակավորումների ճանաչման Լիսաբոնի կոնվենցիայի դրույթների կիրառումը Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից նույնպես Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղություններից է: Պարզելու համար, թե որքանով են նրանք կիրառում այդ կոնվենցիայի դրույթները՝ ԱՓՇԱՏԿ-ն իրականացրել է ուսումնասիրություն Հայաստանի հանրապետությունում գործող պետական և հավատարմագրված ոչ-պետական թվով քսանութ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանակներում: Հետազոտությունն իրականացնելու համար ԱՓՇԱՏԿ-ի կողմից մշակվել և կազմվել է համապատասխան հարցաթերթիկ (կից ներկայացվում է հարցաթերթիկը)՝ հիմնված ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի կողմից մշակված օրինակելի հարցաշարի վրա, որը ուղեցույց է հանդիսացել տարբեր երկրներում

ազգային հետազոտությունների համար: Հարցաթերթիկը բաղկացած է 18 հարցերից, որոնք իրենց բնույթով բաժանված են երկու մասի.

- հարցեր որակավորման/դիպլոմի ճանաչման վերաբերյալ,
- հարցեր կրեդիտային համակարգի և կրեդիտների կուտակման ու փոխանցելիության վերաբերյալ:

Հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ Հայաստանի բուհերը չունեն ճանաչման իրենց մշակած սկզբունքները և հիմնականում այդ հարցի լիազորությունը Կրթության և գիտության նախարարությունը վերապահում է իրեն, իսկ բուհերը միայն որոշում են, թե դիմորդը որ կիսամյակից պետք է շարունակի ուսումը: Հետաքրքիր է, որ օտարերկրյա որակավորումների ճանաչումը հիմնված է ոչ թե ուսման արդյունքների, այլ առարկաների անվանացանկի ու ժամաքանակների վրա, որը ժամանակակից աշխարհում այլևս չի կիրառվում և չի համապատասխանում Լիսաբոնի կոնվենցիայի դրույթներին:

ԱՓՇԱՏԿ հիմնադրամը դեկտեմբերի 15-16-ին Մեծ Բրիտանիայի ՆԱՐԻԿ-ի հետ համատեղ Երևանում կազմակերպել է սեմինար-ուսուցում, որտեղ քննարկվել է նաև Հայաստանի բուհերում անցկացրած հետազոտության արդյունքները: Քննարկման արդյունքում Մեծ Բրիտանիայի ՆԱՐԻԿ-ի ներկայացուցչի կողմից խորհուրդ է տրվել Հայաստանի բուհերի համար անցկացնել վերապատրաստման դասընթացներ օտարերկրյա որակավորումների ճանաչման գործընթացի բարելավման վերաբերյալ:

6. Տրանսազգային կրթության ուսումնասիրություն

ԱՓՇԱՏԿ-ն իրականացրել է ուսումնասիրություն Երևանում գործող տրանսազգային կրթական հաստատությունների՝ օտարերկրյա 9 բուհերի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում (որոնց ցուցակը տրամադրվել էր ՀՀ «Լիցենզավորման և հավատարմագրման ծառայություն» գործակալության կողմից): Հետազոտության նպատակն էր ուսումնասիրել տրանսազգային կրթության իրավիճակը, գործող իրավական դաշտը, վերոնշյալ բուհերի գործունեության համապատասխանությունը ընդունող և շնորհող երկրների օրենսդրություններին: Հետազոտությունը ցույց տվեց, որ անժամկետ տրամադրվող լիցենզիայից բացի ՀՀ-ն չունի իր տարածքում գործող օտարերկրյա բուհերի մասնաճյուղերի կրթական գործունեության նկատմամբ վերահսկողության որևէ արդյունավետ միջոց (կից ներկայացվում է ուսումնասիրությունը): Ելնելով արդյունքներից՝ ներկայացվել են հետևյալ առաջարկությունները՝

- Բարելավել ապագա ուսանողներին տրամադրվող տեղեկատվությունը ՀՀ-ում գործող տրանսազգային կրթական հաստատությունների վերաբերյալ:
- Ազգային որակի հավաստման գործակալության պատասխանատվության ներքո վերցնել տրանսազգային կրթական համակարգը:
- Շարունակել տրանսազգային կրթության ուսումնասիրությունը՝ Էականորեն ընդլայնելով ուսումնասիրության շրջանակները:
- Համապատասխանեցնել ազգային կրթական օրենսդրությունը Լիսաբոնի ճանաչման կոնվենցիային:

7. Կանոնակարգվող մասնագիտությունների ճանաչում

Հիմնադրամի I ձՕՍՀՕ 2008թ.-ին իրականացվել է կարգավորվող մասնագիտությունների ճանաչմանը վերաբերող ուսումնասիրություն, որի արդյունքները ներկայացված են հաշվետվությանը կից տեղեկանքում:

8. Որակավորումների ազգային համակարգ

2008թ. սեպտեմբերին Եվրոպայի Խորհրդի և ԿԳՆ-ի հետ մեկտեղ ԱՓՇԱՏԿ-ը մասնակցել է “Որակավորումների շրջանակները բարձրագույն կրթության ոլորտում” կոնֆերանսի կազմակերպման աշխատանքներին (կից ներկայացված է կոնֆերանսի ընդհանուր հաշվետվությունը): Հիմնադրամը Եվրոպայի Խորհրդի կողմից ստացել է դրամաշնորհ որակավորումներին վերաբերվող մենագրությունը հայերեն թարգմանելու համար:

9. Որակ և ճանաչում

Բոլոնիայի գործընթացին մասնակցող Հայաստանը շարունակում է վերաձևել իր բարձրագույն կրթության համակարգը եվրոպական չափանիշների համաձայն: Որակավորումների և ավարտական փաստաթղթերի միջազգային ճանաչումը և որակի ապահովումն ու հավատարմագրումը Բոլոնիայի գործընթացի երկու հիմնական գերակայություններն են: Եվրախորհուրդը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Եվրոպական հանձնաժողովի հետ միասին հիմնադրելով Եվրոպական որակի ապահովման գործակալությունների ցանցը, հետևողականորեն աջակցում է երկու ցանցերին՝ ԷՆԻԿ/ՆԱԸԻԿ և ENQA:

Որակի ապահովումը անհատի որակավորման ճանաչման անհրաժեշտ նախապայմանն է, որի մասին նշվել է 2001թ. Պրահայի կոմյունիկեում: Միայն որակի/հավատարմագրման մասին տեղեկությունները դեռ բավարար հիմք չեն գնահատելու անհատի որակավորումը: Որպեսզի հնարավոր լինի ճշգրիտ տեղավորել անհատի որակավորումը ընդունող երկրի կրթական համակարգում կամ աշխատաշուկայում, անհրաժեշտ է որակավորումը շնորհող երկրի կրթական համակարգի խորը իմացություն: Միջազգային համատեքստում ԷՆԻԿ/ՆԱԸԻԿ –ը և ENQA-ն ունեն մի շարք համատեղ ծրագրեր մասնավորապես կապված միասնական տերմինաբանության բառարանի մշակման, միասնական աստիճանների և ուսումնական ծրագրերի, տրանսազգային կրթության խնդիրների հետ: Միջազգային կրթական հանրությունը հասկանում է, որ Բոլոնիայի գործընթացի այս երկու գերակայությունների զուգահեռ և ներդաշնակ զարգացումը կխթանի եվրոպական կրթական տարածաշրջանի ձևավորումը, որտեղ ուսանողները և դասախոսները կարող են ազատ տեղաշարժվել՝ ակնկալելով իրենց որակավորումների արդար ճանաչումը: 2009թ. կառավարության որոշմամբ ստեղծվել է ազգային որակի հավաստման գործակալությունը: Ազգային մակարդակում որակի հավաստման գործակալության և ԱՓՇԱՏԿ-ի համագործակցությունը հնարավորություն կտա ճանաչել ՀՀ ազգային

կրթական համակարգը միջազգային հանրության կողմից, դարձնելով այն գրավիչ ու մրցունակ՝ ճանաչման արդար ու թափանցիկ ընթացակարգերով:

2008թ.-ին հիմնադրամի անձնակազմը կրել է մի շարք փոփոխություններ: Տարվա ընթացքում գրասենյակի երկու մասնագետ տեղափոխվել է այլ աշխատանքի, իսկ կազմակերպության կազմը համալրվել է մեկ նոր մասնագետով և մեկ իրավաբանով: Հիմնադրամը ունի մի շարք խնդիրներ, որոնք հիմնականում կապված են գրասենյակային սուղ պայմանների և երիտասարդ մասնագետների հոսունության հետ:

ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է մասնակցել նաև Բոլոնիայի գործընթացի աշխատանքներին, մասնավորապես շարժունության և ազգային զեկույցների գնահատման խմբերի աշխատանքներին:

2007-2008թ. իրականացված աշխատանքներ

